

## ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ

(Գրական-կենտագրական նոր նիւթերով)

Ա.

Գրիգորիս Աղթամարցին մէկն է մեր միջնադարեան նշանաւորագոյն բանաստեղծներից, տարարազդար շատ քիչ բան դիտենք նորու անձի, ժամանակի և զործունեալ թեան մասին. ուստի և ամենափոքր նորութիւնն իսկ ունի իւր արժէքը. Ներկայ յօդաւածով բանասիրութեան մատչելի ենք կամենում անել այն նիւթերը, որ ընկել են մեր ձեռքը Աղթամարցու վերաբերմամբ:

Գրիգորիս Աղթամարցին ապրում էր ժդ. դարու առաջին կիսում. Կոստանդնուպոլիս 1515, 1519 և 1523 թուականները հանելով նոյն խոր հեղինակի Երգերից՝ նորա կեանքի տևողութիւնը հասցնում է մինչև 1569 թիւը<sup>\*</sup>. ստկայն իրաւամբ կտսկածել կարելի է վերջին թուականի մասին. մի մարդ, որ 1515 թուին դրական գործիշ էր և մեղքի զիտակցութեան ու ապաշխարութեան զգացումով տուպորուած, դժուար ասլըէր այնուհետև մինչև 1569 թիւը<sup>\*</sup> կարագի Կիրակոս վարդապետի յիշատակարանը, որտեղից յարդելի բանասէրը հանում է այս թիւը, չի վերաբերում Գրիգորիս տաղասացին: Անկասկած է, որ Գրիգորիս տաղասացից անմիջապէս յետոյ կամ ոչ շատ ուշ յաջորդում է մի երկրորդ Գրիգորիս, որ յայտնի է «փոքր» մականունով: «Հաւաքարան անուանց կաթուղիկոսաց» զրութիւնը<sup>\*\*</sup> երկու Գրիգորիսների մէջ չորս անուն է զնում. անկարելի չհամարելով միջանկեալ կաթուղիկոսների զոյութիւնը, սակայն ըստ ամենայնի վստահելի աղբիւր չէ այն, և, երեի, որ եւ է հիմք ունին կ. Պոլսի Աղղային հիւանդանցի Օրացուցի խմբագիրները կամ Խաչատուր Լեռնեան<sup>\*\*\*</sup>, որ Գրիգորիս տաղասացի (1509—1534) անմիջական յաջորդ են նշանակում Գրիգորիս փոքրին (1542—1612): Գրիգորիս տաղասացի սթոռակալութեան սկզբնաւորութեան մասին աղբիւր

\* Գրիգորիս Աղթամարցին եւ իւր տաղերը. Թիֆլիս. 1898. եր.

55. 87—94.

\*\* Մեսրոպ վ. Մարտուղեանց. Եղմիածին. 1916. եր. 62./3.

\*\*\* Օրացոյց 1902. 1909. տես եւ Հաւաքարան. եր. 66.

չունենք ձեռքի տակ, բայց հաստատ առևլ կարող ենք, որ նա կենդանի էր 1536 թուին, երբ Նկարազարդում էր Երուս. № 473 ձեռագիրը. նա կենդանի էր նաև 1544 թուին, երբ Զաքարիա և Աղիսկոպոս Գնունեաց զրում և Նկարազարդում էր Աղէքսանդրի պատմութիւնը Աստուածատուր պատրիարքի համար. Զաքարիան յիշատակարանի մէջ անուանում է իւր երկու ուսուցիչներին՝ Գրիգորիս և Յովսէփ Աղթամարցիներին. այս ևս ևս թափուրս յամենայն բարեաց զԶաքարիայ (Տ!) մեղապարտ և պիտի պատմանից աշակերտին (Տ!), որ յայսմ ամի վոխեցաւ ի դասս անմահից և եղեն բնձ մեծ սուբք\*, Այս խօսքերից պարզ է, որ յիշատակարանի զրութեան ժամանակ դեռ ևս կենդանի էր Գրիգորիս, ապա թէ ոչ առանց յիշատակութեան չեր թողնի և սորա մահը. Զաքարիայի յիշատակած Գրիգորիսը երբէք «փոքր» կոչուածը լինել կարող չէ, այլ միմիայն տաղասացը, ժամանակից, դործակից և յիշատակարանների մէջ միասին յիշատակուած Յովսէփ Աղթամարցունեան թողնենք, որ ամենենին հաւանական չէ, թէ Գրիգորիս փոքրը. 1542—1610 կամ 1612 թիւր կաթուղիկոսութիւն անէր, որքան և Երիտասարդութեան հասակում աթոռ բարձրանար. Ապա, ուրիմն. և սխալ է լ. Խաչատրեանի և Օրմանեանի կողմից Գրիգորիս փոքրի աթոռակալութիւնը այդքան վաղ նշանակել\*\*. Գրիգորիս Աղթամարցին յիշատակուած է հենց նոյն Յովսէփի վարդապետի հետ Երուս. № 473, Զ-ի զրիչ Մարգարէ Արճիշեցու կողմից. եր. 136. «զՄարգարէ զրիչս և զԳրիգորիս կաթուղիկոսն և զՅովսէփի վարդապետն յիշեցէք ի քառ, և ամա ողորմի ասացէք մեր և Նոց ծնաւզացն և Ամա ձեզ ողորմիս. Մի ուրիշ յիշատակարանի զրիչ, որ զրուած պիտի լինի. 1526 թուին\*\*\*. «ի կաթուղիկոսութեան Տէր Գրիգորիսի, ի թագաւորութեան աշխարհակալ արքային

\* Ակնեան. Զաքարիու և վիճակու Գնունեաց և իւր սալերը. Վանեան 1910 եր. 7.

\*\* Ազգային Հիւնականոցի թուարժութ Օդացոյց 1902. 1909 և Ազգակառութ եր. 2249.

\*\*\* Արտ անձականց. Թորոս Ազքար Ը. 254. Տապարութեան սխալ պիտի համարել տիհե. \* Յուականը. 1626 թուին ոչ Գրիգորիս կաթուղիկոս կար և ոչ անդամանը առունու սուլթան. Եթէ Ա-Հե-ի փոխարէն նշանակենք Զ-Հ-=1526, օիշդ Առէլյան Բ-ի և Գրիգորիս ապասացի ժամանակը կլինի. Օր Խուեան յիշատակարանի բովանդակութեան վրայ ուշը վի դարձրի, ուստի և առունու հերի մէջ է ընկել. Համ. Ազգակառութ 2595.

առլթան Սուրբման խոնդքարին (1520—1566)։ Խնդրում է յիշատակել և զուսուցիչն իմ զշնորհապարդ և զրանիքուն Յովակի վարդապետ Աղթամարցին...»։ Մենք կտեսնենք նաև որ Յովակի Աղթամարցին ոչ միայն Գրիգորիս տաղասացի ժամանակակիցն է եղել, այլ և զրական դործակիցը փոքր չափով։

Դրիգորիս տաղասացի կեանքի տեսպութիւնը հասցնելով մինչև 1544 թիւը, չենք կարող ասել, թէ այսուհետեւ նա որքան ապրեց. Եիրակոս Նարագեցին ոյ ոմք ամի ի հայրապետութեան անսոն Մուխոյէլ կաթուղիկոսին ուռոր աթոռոյն Էջմիածնի և Գրիգորիս կաթուղիկոսին Աղթամարց...» զրել է Թէմիքիան-Շուրայի Հայոց եկեղեցու առաջարանը. Եռատանեան այստեղ յիշատակում Գրիգորիսին նոյնացնում է տաղասացի հետ<sup>\*\*</sup>, որ ինչպէս վերել յիշեցինք, անկարելի է. զա կարող է միայն Գրիգորիս փոքրու լինել, որ Զամբուից էլ յայտնի է, որպէս Միքայէլ կաթուղիկոսի մրցակից. «Երջինս հայրապետական աթոռն է բարձրացել 1567 թուին, բայց 1545 թուից Ստեփանոս Առմաստեցու աթոռակալն էր, առա այն երկուոր միասին 1557 թուին նշանակում էն Տէր Բարսեղին և Տէր Գրիգորին<sup>\*\*\*</sup>. Արմեն կաթուղիկոսը վերջին թուականին նշանակելով Միքայէլի կաթու-

\* Ամենայն հաւատական թեամբ նոյն է այս Յովակի Աղթամարցուն ոմն առնեանահող զրիչ Յ<sup>Ա</sup>միք (լուս Յ<sup>Ա</sup>միք) Աղթամարցին, որ 1497 թուին Տարբերանեաց Արգելան մենաստանի մէջ զրել է չափուոր զեղուցկու Անամբ Այարազարդէ է մի շարական, այժմ՝ անպնդական Միւն Վրայինում քնակուող Յովհաննէս Աղթամարցի։ Այն յարգաւոր, որ ցոյց եւ ասիս Արդերանի մենաստանում այս Յովակի Աղթամարցուն ապացոյց կայուն է լինել, որ նա որոշ նեղանակու թիւն էր զայելու միք պատմած նոյն է Զարարիսից ուսուցիչ։ Յովակի Աղթամարցուն նետ, ամբով ընդունեցին իւ քնիական զմեղ իր զվաղ ժամանակաց եղբայր և պատուազ ընծարելին զիս, ոչ բայ անարժանութեան խօսմ, այլ բայ բնածին բարերաց։ Եսկ զայոր միարաններից մէկը Ստեփանոս Նորին մուրաւառ ողջանուոր պղծանիրն զայ բիրը եւ զայի լուսնայի լուսայի առաջանակ է Յովակի Աղթամարցին. Այսու առուցիչն էր Տէր Կարապետ Ենրիկիցին, որ բազում աշխատաւ թիւ ուսուց զարտեալու բղժինել մասպատճառ եւ զրիւ սորին, այլ եւ զնիարեն, որ եւ ընդ հովանեաւ սորտ ժամանակաց ծաղկեցի զայ ուկով եւ բազմերանդ զունուք, մարմնաւ որ ծնողներն են տէր Աւազ եւ Մենքիար, հանգաւցեալ եղբայրները Աստամատուր եւ Աղիկորէի, ինեղանիները Շարարը և Աւազ։

\*\* Գրիգորիս Աղթամարցին եր. 40.

\*\*\* Առաքել Դաւիթիցի Ը. իրատ. 457/8.

դիկոսութիւնն, աւելացնում է. «Այս Միքայէլս նախապէս ճմլեաց զկզակս Աղուանից և Աղթամարու կաթուղիկոսացն, որք կամէին ոտն ածել յԱթոռս ուրբ էջմիածնին»...\* Աղթամարցիք կամենում էին էջմիածնից յափշտակել Առյն ու Սալմաստը, բայց Միքայէլ կաթուղիկոսը «Եհան զլաւ ուղամ ի Շահ Թահմազէն» և վերջ տուաւ. Աղուանից և Աղթամարցիների ունձգութիւններին, Տարաղղաբար ոլարդ չէ, թէ այդ հրովարտակէ մը թուին է հանուած, մենք կարծում ենք. որ նախապէս բառով 1557 թուից յիտոյ եղած գործունէութեան առաջին կարեոր իրողութիւնն է ակնարկուած. և յիրաւի միայն այդ թուականից յիտոյ էլ հնարաւոր էր Շահ Թահմազից Առյի և Սալմաստի համար հրովարտակ հանել, երբ 1548 թ. սկսած պատերազմները Պարսից և Օսմանցւոց մէջ, վերջացան 1557 թուին. Ով էր այդ ժամանակ Աղթամարի կաթուղիկոսը, ասել չենք կարող յամենայն դէպս Գրիգորիս փոքրը չէր. Նորու մասին յիշատակութիւն չկայ, թէ փորձած լինի Առյի և Սալմաստի զաւաները յափշտակել, յատուկ «Փարման» է քերել աալիս Տաճկաստանին հպատակ միքանի ուրիշ պաւանների համար. «Ի խառնակմանց երկրիս և ի տարազրութենէ կաթուղիկոսացն մերոց՝ համարձակութիւն զտեալ նոցա (Աղթամարի կաթուղիկոսները) երթունն երթինն ունի ածեին ի վիճակս սրբոյ Աթոռոյ», ... Քանզի Գրիգոր կաթուղիկոսն նոցին (Գրիգորիս փոքր) ի ոիդ թրոն մերում ֆարման քերէ ի յՕսմանցւոց թագաւորէն վասն Վանայ, Համդայ, Արեշու, Խլաթու, Մշու և Բաղէշու, և այլոց մերձակայիցն, թէ այսոքիկ ի բնէ մեր են վիճակը, այլք սեազլուխը զաւթեալ են և ես մեամ ի ներքոյ միրիի. Այսոյէս արարեալ, ֆարման քերէ ի Տաճկաց ջձու թուին. Յետոյ մեր կաթուղիկոսը դիտացեալք՝ արդ առնեն թագուորին, և զԳրիգոր կաթուղիկոսն Աղթամարու յիտո ընկրկեն. և զՓարման նորին առնուն ի ձեռացն»\*\*: Ընդգծուած բառերից և վերի մէջ քերուած բացատրութիւնից ոլարդ է, որ Գրիգորիս փոքրի նախորդներն են եղել Առյի և Սալմաստի մասին վէճ հանողները և այդ կարող էր Պարսից և Օսմանցւոց պատերազմների (իսկապէս 1531 թուին սկսուած), ուրեմն և մօտաւորապիս Գրիգորիս տաղասացի ժամանակները լինել. Գրիգորիս փոքրը խրնդիր է յարուցանում միայն Տաճկաց սահմանում եղած պաւանների մասին, այն էլ 1574 թուին.

Այնուհետեւ աւելի յաճախ տեղեկութիւններ ունինք Գրիգորիս փոքրի մասին. որ աւելորդ չենք համարում ամփոփել այս-

\* Զամբո. եր. 20. 78.

\*\* Զամբո. 93.

տեղ, երկու համանուն Գրիգորիսների անձնու ու ժամանակը որոշելու խնդրին նոպատակով՝ Վարդան զրիցը ՌԵՒ ( $=1575$ ) թուին զրել է մի Յայսմառուրք և հայրապետութեան տէր Գրիգոր կաթուղիկոսին և մերոյ առաջնորդի Խնդրակատարի Ներսէս բարունապետի Ամկեցւոյն.... ի վախչանութեան աշխարհիս ինքնակալ խոնդքարին սութան Մարտիրոս, որ յայս ամի... եղե նոր փառշահ»<sup>\*</sup>: Այստեղ յիշատակուած Գրիգորը Աղթամարին է և ոչ էջմիածնի Գրիգոր ԺԲ: Մի ուրիշ զրիչ Մարտիրոս քահանայ 1577—1579 ի. զրել է մի աւետարան Հիղան քաղաքում և հայրապետութեան Հայոց ուն աւր Առաքելին սը աթոռոյն էջմիածնի, ի պատրիարքութեան Աղթամարայ տէր Գրիգորիս կը զկսի <sup>\*\*</sup>: Նոյն Մարտիրոս քահանան նոյն քաղաքում զրել ու նկարադարձել է մի Առուածազունչ 1594 թուին, և հայրապետութեան գերահրաշ և սուրբ աթոռոյն էջմիածնայ տեսոն Դաւիթի և ի կաթուղիկոսութեանն Աղթամարայ տէր Գրիգորոսի...<sup>\*\*\*</sup>: Մի շատ կարեւը յիշատակարան 343<sup>o</sup>. Գրիգորիս փոքրի առնմի մասին ունի պատերազմի ընթացրում Աղթամարից ըերտած և այժմ 123 համարը կրող, Սարգիս Պիծակի նկարագրուած տևաւանը<sup>†</sup>: մեր ծանօթութիւնները Գրիգորիսի շինուարութիւնների, նուիրատութիւնների և տահմի մասին առելի ընդուրձակում է Տէլիանցի ըերտ մի յիշատակարան<sup>‡</sup>: երկու ան էլ պրուած 1062 թուին: Վերոյիշեալ Մարտիրոս Հիղանցու և իւր Սարգիս եղբօր կողմից պրուած է և նկարագրուած մի աւետարան: ՊԶմբուած կոչուած, 1604 թուին, և հայրապետութեան հայկակեան սեւի էջմիածնին Տ Մելքիսեդի, և մերոյս կաթուղիկոսութեան Աղթամարոյ Տ. Գրիգորիսի<sup>†\*\*\*</sup>: Մի այլ աւետարանում ծաղկուած է 1605 թուին Աիդանում, և հայրապետութեան ուն ուր Մելքիսեդի կաթողիկոսի էջմիածնայ և ի մերոյս Ախթամարայ տէր Գրիգորիս կղկափ ամենայն Հայոց<sup>†\*\*\*\*</sup>: Նոյն 1605 թուին Քանաքեռի եկեղեցւու աւետարանի յիշատակարանի համեմատ, զրուած է Խոչատուր Էլիզաբետ Ճեղքով և հայրապետութեան հայկակեան: սեւի էջմիածնին

\* Թորոս Ազրար. Ե. 260.

\*\* Զեռակիր Երուա. № 2569/14.

\*\*\* Թորոս Ազր. Ե. 262.

† Տես Յանելուած 1:

†\* Հայերդ, Թիֆլիս. 4882. Յանուարան ԺԲ.

†\*\* Թորոս Ազր. 266.

†\*\*\* Ակզաղբական Հանդ. ԺԲ. 159.

†† Մեր Յիշատակարաների ժողովածուն, անտիւր:

ա՞ն տէր Դրգուսի Ուշքայիցոյ եւ ի մերոյս կաթուղիկոսութեան տէն տէր Դրգուսի Աղթամարցոյ էն. Կոստանդնեան և Օրմանեան Դրիդորիսի կեանքը հասցնում են մինչ 1610, իսկ է. Խաչառքեան մինչև 1612 թիւը\*, բայց մենք հաստատուն վաստեր չունինք ձեռքի տուկ նորա կեանքի այդշաբ տեսզութեան մասին:

## Բ.

Տաշեանի, Կոստանդնեանի և Ալիքնեանի ուսումնասիրութիւններից յայտնի է, որ Դրիգորիս Աղթամարցոյն Առաջ Կալխովենէսի Աղեքսանդրի պատմութեան և կաֆաները ունի զրած. այդ իրողութիւնը հաստատում է Երուս. № 473 Զ ով, որ գրտած է նոյն իսկ Դրիգոր Աղթամարցու մասնակցութեամբ. Աղթամարցու կաֆաների որոշման համար այս օրինակն ունի յատուկ արժեք. առարարազգարար ժամանակին այդ խնդրով չէինք հնարքը բարուած, ուստի և մեր այնուն եղած ժամանակ (1911 թ.) նկատողութեան շենք տուկ այն բոլոր կաֆաները, որոնք լուսանցրում նշանակուած են Դրիգորիսի անունով. Յամենայն ցէսու այդ Զ-ը նախազարարեան մի օրինակ է և այդտեղ բացի համառու կեշանկու և Դրիգորիս Աղթամարցու մնանակների համառապրութիւնից, որիշները շկան, թէև ընազրին կից կան և որիշ կաֆաները Աւելորդ շենք համարում հաղորդել Աղթամարցու մնանակ մեր կողմից նկատողութեան առնուած երկու կաֆաները. զուցանից տուաջինը օհաւձեւ շատ զրոց զիտեմ, բայց շկարեմ զրել հաւասար. Լուսանցրում 8<sup>м</sup>. նշանակուած է ոի Գրիգոր կից պէտք ու ասացիւ աւագին կաֆեղ. յիշեցէր ի ք<sup>ա</sup>ռ. ընդ նմին և զՄարդ. զրիշու. Ն'րատուած է մեր տեսարակուած նուն Դրիգորիսի վերջին կաֆեղ, 156<sup>մ</sup>. ոի Գրորիս կաֆեղ ու ասացիւ ի յարքայէ ըերնեն. ազու ի նշանակուած տեղն զրէ. ևս մոռացայ, ի զ<sup>ա</sup>յ հին ուրինակին կու զրիւ Այս իռաքերը Մարզորէ զրչինն են և կարենք. հին օրինակ տուած զրիշը հասկանում է Դրիգորիսեան խմբազրութիւնից առաջ եղածը, որի մասին և ուրիշ տեղեր էլ յիշատակութիւնն կայ. Դրիգորիսի վերջին կաֆան հետեալն է. սին անձ (8) ուժ ու թէ պիտուրք, այս տանը հետեւում է «Դաղաքեցար Աղեքսանդրէ», որ ուրիշ օրինակներում նախընթացից առաջ է զրուած. Երւասաղէմի Զ-ը սպաս է Զաքարիայի ներմուծութիւններից նաև կեշառեցու վերջարան յիշատակարանի մէջ, ուստի և այս օրինակը արժանի է յատուկ ու-

\* Կոստ. Դրիգորիս Աղթ. 8.—Օրմանեան, Ազգապատ. 2249, 1. Խաչառքեան, Աղդ. Հուանդ. Օրացոյց 4909. ճամ. Հաւաքարան եր. 67.

շաղրաբնեան կաֆաների հեղինակների ուսումնասիրութեան տեսակետով։

Պատերազմի ընթացքում վարագից բերուած է Սուտ Կալլիսթինեսի Աղեքսանդրի մի ձեռագիր, որ այժմ կրում է 1522 համարը. երբ է գրուած այդ ձեռագիրը, ճիշտ թուականը որոշել չենք կարող. բայց 2<sup>րդ</sup> ուղղուազարդի խորանի տակ կարմիր թանաքով կնիքը չՅ<sup>ա</sup> թ<sup>ա</sup> և ծ<sup>ա</sup> կիրակոս կաթողիկոս բառերով գրում 1796 թուականը, որից երեսում է թէ Սոյ աթոռի սեպհականութիւն է եղել որ ժամանակ. Կիրակոսը զահակալել է 1791—1825 թ. և յայտնի է ամեն մականունով Նոտրադըրով մի յիշատակարան կա. սկարզում է, որ Զը մահանեսի Եղիսարէթի, Շահկիւլի, Աննայի, Մարիամի և Հովհաննէի կողմից նուէր է տրուած ամ<sup>ա</sup> հզ<sup>ա</sup> ց արեւացի Օհանին, Պականին և որդուոյն պ<sup>ա</sup>րն Մինասին, և Մինասի որդոյ ար<sup>ա</sup>ց Սուտինին հոգուոյն ոյ յաջն ա՞ն Կիրակոսի կրտսուահանար և որ<sup>ա</sup> զն կթ<sup>ա</sup> դիմին յամի ա՞ն 1803 և յունիս ժ. ա. Վարդապէյ վանքն է ընկել ձեռագիրը 1865 թուին Մի անյայու (չի կարուցած անունը)՝ աւելի հին վերջին ստացողի թուականն է Ակ(=1611), այս թուականը տեմիս առ զայ հայուակելով, առանու լոտ զայ կարող Ենք 1544 թուականն ընդունել երբ Զարարիա եղիսակուաս որից և նկարազարդոց Աղեքսանդրի պատմութեան Աստուածատուր սրարիարքի օրինակը իւր կողմից նոր կաֆաներ աւելացնելով և ներմուծութիւններ անելով եհշտուցու յիշատակուրանի մէջ, Վարդապէյ այս ձեռագիրն անի, թէ մէկը և թէ միւսը, ուրեմն և զրուած է 1544 թուից յետոյ, տակայն հասդրական նշաններից զատելով, ոչ ոչ քան Ժ. դարու ելլերորդ կեսը։

Բայց մեզ թուում է, որ նու գրուած է աւելի վաղ, առաջին պատկերի տակ Ի<sup>ր</sup>, բուն զրչի ձեռքով զրուած է հետեւու Նկատողութիւններ.

«Եւ զանարժան Յակով նկարու յիշ<sup>ա</sup>ցը ի ք<sup>ա</sup>ն  
Եւ ես ստուգող սորա զո՞ր Դրի<sup>ա</sup>զրն, որ մեկնեաց  
զանարժականք սորա  
և զջուղեցիս նկարեաց, յիշեցը և ա՞մ ողորմի տացէք»։

Ստուգող կամ ուղղող դործածական եզր է զրչութեան արուեստի մէջ. դա այն անձնաւորութիւնն է, որ զրչի արտազրածը համեմատում էր բնազրի հետ, որպէս զի սխալներ չսպրզուին արտազրութեան մէջ. Տէր Դրիզորիսը ուղղել է և անօրինականները, այսինքն պատկերները քացարը. անօրինականներ էին կոչում զրչութեան աւետարանի այն պատկերները, որոնք Փրկչի անօրինութիւններն էին պատկերացնում, այստեղից էլ

շահորինական» բառը դործադրուել է պատկերի փոխանակ։ Զեռագրի մէջ շատ չեն սրբազրութիւնները, բայց ճիշդ նոյն ձեռքով, որով բացատրուած են պատկերները։ Այդ բացատրութիւնները ցուցումներ են եղել պատկերների բավանդակութեան մասին, Յակոբի նկարելոց առաջ որովհետեւ շատ անդամ նկարիչը հէնց զրած բացատրութեան վրայ է նկարել. օր. 15 նոխահայրերի մեղանչելու պատկերն է. լուսանցքում դրուած է. «որբախոնէ, եայ. Ակամ, աւձն խարեց. պաղէն կերն. մերկց<sup>ւ</sup>, ընդդժուածը ալ մնացել է պատկերի տակ։ Եր. 17 բացատրութիւնից կարդացում է միայն պլուխ... Ժկ... արովհետեւ տոխածի մարթնով չորս դիխանի սիրներսի պատկերը մասսմբ ծածկել է զրութիւնը։ Այսպիսի գէպքերը հազուազիւունն, ինչպէս 20, 26, 28, 37, 49, 67, 131. Պէտք է ենթադրել. որ միւս պատկերների կողքին եղած բացատրութիւններն էլ նկարելոց առաջ են զրուած, որոնց հետևողութեամբ և նկարել է Յակոբը. օր. 22, 28, 31, 34, 166, և վերջին պատկերի համար զրուած է «վէրի մարդու ուներն, ձեռներն սղոց ուռոց. վիզն յերկան»։ Այդպէս էլ նկարուած է. Երբեմն էլ նկարները համապատասխան չեն բացատրութեան, պէտք է կարծել, որ նկարիչն է զանց արել. խուսափելով դժուարութիւնից։

Ո՞վ է այդ տէր Գրիգորը։ Հետեւով ողբակի մէջ կտեսնենք, որ Գրիգորիս Աղքամարցին զրազուել է Աղեքսանդրի պատմութեան նկարազարդութեամբ 1536 թուին, և միւս կողմից տեսանք, որ զիրքը զրուած է ԺԶ. զարու երկրորդ կիսից ոչ ուշուրիշ ժակը Գրիգորը, այսինքն եպիսկոպոս Յան կաթողիկոս Աղքամարցոց յետոյ մինչև ԺԶ. զարու վերջերը, յայտնի չե, որ զրազուած լինի նոյն զործով. բնակութեարար մարդու զիիսի մէջ այն միւտքն է զարթնում, թէ այս մեկնող տէր Գրիգորը Աղքամարցին կարող է լինել. Առա զէմ է խօսում միայն այն հանգամանքը, որ Երուս. Ն ՀՅ. ի ցուցմամբ սինձ հանց ուժ ութի պիտեր կամբան Գրիգորիունն է, իսկ այստեղ լուսանցքում չիչ, այսինքն նեաշատուր է նշանակուած. մամանակը, զուցէ, վերջնականապէս կորոշէ այս խողիցը։

Ամրագի ձեռագրի մէջ տասնին մասսմ տոհատրուել «կաֆաների հեղինակների անուններ չեն նշանակուած լուսանցքում, բացառութեամբ Զաքարիայի, 71 երեսից սկսած նաև «իւ», իսկ 116 երեսից սկսած, այսինքն Պարմէնիոսի, Աղեքսանդրին դեղակուր անելու փորձից յետոյ, յաճախում են «իւ»։ «Զը» կամ «Զըրէ», «Դը» համառատպութիւնները։ Գրիգորիս անունով նշանակուած կաֆաները հետեւալներն են։

ա) 133. «Յորժամ չարին ի յետ... կաֆային հետեւող

«Դեսպանդ», որ երեկո և «Ասայ թէ ինձ հի ես զու» կաֆաների դէմ նշանակուած է «Գր», բայց ոչ առաջնի: Մենք Յովասափ Սեբաստացուն նուիրած յօդուածի մէջ ցոյց ենք տուիլ այս տան կապը Թրիկի հետ, համարելով սորանը կամ սորա հետևողութեամբ մի այլ հեղինակի զրած<sup>\*</sup>: Տաշեան համարում է այն կեչառեցու զործ, որ բնաւ կարելի չէ:

բ) 156. «Փառք ըեզ արարիշ ա՞ծ...» կաֆային հետեւ «Աղեկանդր դիւրաւ տիրեց...» տան դէմ նշանակուած է «Գր» բայց ոչ առաջին տան, որ զարձեալ Թրիկի հետ է կապուած<sup>\*</sup>:

գ) Կարմրադեղ վերնադրով. «կաֆայս ի Գրզրիսէ առ Աղեկանդրոս Աւաղ զիմ աւուրբս ու զկեանքս, իսկ սորան հետեւ «Զաւրութիւնի բազկիս բարձաւ» տան դիմաց լուսանցքում նշանակուած է «Գր»<sup>\*\*</sup>:

դ) 261. «Աքանդար արքայից արքմ...» լուսանցքում «Գրզմէ». Արանից անմիջապէս առաջ զըռւած «Մայրք մանկազունից լացէք» ոչինչ չունի, իսկ սրանից էլ առաջ դրուած «Այ իմ միամաւր որդեսկի դիմաց լուսանցքում «Էլչ»:

Ընթերցողը տեսնում է, որ այս Զ-ով հնարաւոր չէ Գրիզրիսին վերապրուած կաֆաների խնդիրը վերջնականապէս լուծել, բայց հարկ համարեցինք ձեռքի տակ եղած նիւթերը մատչելի անել բանասիրութեան:

### Գ.

Երուսաղէմի. № 473 ձեռազիրը մեզ մի այլ կարեւոր նորութիւն է տալիս Աղթամարցու կեանքի վերաբերմամբ. Նու ոչ միայն կաֆաներ է զրել, այլ նկարազարդել է Աղեքրաանդրի պատմութիւնը բովոնզակութեան համեմատ: Մի շարք յիշտակաբաններից կամ լուսանքցի նկատազութիւններից պարզում է, որ ձեռազրի զրիչն է Մարզարէ Արճիշեցին, որ 1536 թուին ապրում էր Պարակում, և այստեղից մաս մաս ուղարկում իւր զրած Աղեքրսանդրի պատմութիւնը Գրիզրիսին նկարազարդելու: Բայց Աղթամարցին բոլորը չեն նկարազարդել, այլ մինչև 33-րդ երեսը: Թագուծ տեղերում պատկերների տեղերը բաց են թագած, թէ զրչի ցուցումներն ու նկատազութիւնները Գրիզրիսի անունով շարունակուել են մինչև վերջ: Առկայն ինչ որ կայ, այն էլ կա-

\* Արարատ 1918. Ապր.—Դեկտ. Համ. Կոստանդնուպ Գրիզրիս Աղթամարցին եր. 444.

\*\* Համ. Գրիզրիս Աղթ. եր. 449.

ըսոր նշանակութիւն ունի մեր մանրանկարչութեան պատմութեան համար։ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսը, ինչպէս տեսանք, Դրեզորիսի աշակերտն է. հետաքրքրական է պարզիլ, թէ Զաքարիան պարզ ընդօրինակն է Աղթամարցու պատկերների, թէ ինքնուրոյն իւր պատկերների մէջ։ Տարաբաղդարար այս հարցի պատճենանը ճշգիւ և մանրամասնութեամբ տալ չենք կարող, ձեռքի տակ չունենալով Աղթամարցու պատկերների լուսանկարներ. բայց այն նկատողութիւնը, որ ունինք մեր ձեռապրում Աղեքսանդրի ձիու մասին, առայցոյց է, որ ուսուցչի և աշակերտի նկարների մէջ տարրերութիւն պիտի լինի։ Զիու մասին նախ զրուած է կարմրադեկով մի կաֆայ.

10<sup>o</sup>. Զուարակա պլուս յետ և երիվար  
Շատոց ածէ կինոջ և դժար.  
Ով Փիլիպոս զայդ որ տեսար  
Տուր և պահեստ զընդանարար  
Մինչ երեխ կայտառն ի յար  
Աղեքսանդրոսն հրմտարար  
Դովաւ տիրէ երկրի յերկար  
Ծով և ի ցամաք ընդհանուրարար։

Ազա իրու տրա շարունակութիւն սև թանոքով պրչի կողմից առելացրած է. «Ծաղիկ հան, ով փառաւոր և հրաշալարդ հոգնոր Տէր, որպէս և պատմութի՞դ վկայէ և զքո ուսց մոխիր Մարգարիկո յիշելոյ արժան արտ ի տ՞րս։ Եւ հետեւեալ կաֆայի ցուցման համաձայն նկարուած է ձին՝ զլուխը և ամսերը թաշուներից, մէջքն ու աղղըները տախւծ ու վազրներից, պոչի ծայրը մարդիկ, իսկ մէջը տախւծի պոչը վիշտալ օձ։ Զարարիտյի նկարած ձին, թէպէտ նոյն տարրերն ունի, բայց զասաւ որութեան մէջ տարրերութիւն կայ. օրինակ մէջքի տախւծի պոչը զոյտ մարդիկ են, իսկ բռն պոչը վիշտալ օձեր։ Պատկերի տակ զրուած է կարմրադեկով հետեւեալ կաֆան։

Զի ըզքեզ զավել կամիմ ցլազլութ ծնունդ ծովային  
Բաշըդ հրռելուն է, քո լանջըդ ու մէջքդ յանիւծ նմանին  
Սըմբակդ յօրինակ (չ!) կազմած, հանց ուժեղ զինչ ուշ-  
կայպարոյն։

Երանի տամ այն բախտին՝ որ տուպրօք քոյին յորդորին։

Խնչպէս վերև վարագի Զի մէջ տեսանք այստեղ ևս պատկերների տեղը զրչի կողմից բաց է թողնուած և լուսանցքում, երրեմն նաև բնապրի մէջ, ցուցումներ զրուած կամ բնապրի բովանդակութիւնը մասնանշուած, որի համեմատ պէտք է նկար-

ուէին պատկերները. այդ ցուցումները երբեմն ընդհանուր են, զրիչների համար և երբեմն ուղղուած մեր Զ-ի նկարիշ Դրիգորիս կաթուղիկոսին:

2<sup>ր</sup>. Սուրաթի տեղ թող, ով իմաստուն քարտօղար և զՄարդարէ զրիչս յիշեա ի տ<sup>շ</sup>ր<sup>ւ</sup>:

3<sup>ր</sup>. «Շաղիկ զաւձն հան», Եւ նկարուած է Փիլիպոսը նըստած, թոշունը զոգին ձռւ է ածում, իսկ միշտապը առաջին՝ բնագրի բովանդակութեան համամատ:

11. «Շաղիկ հան ո՞ւ ասէ», այսինքն համապատասխան բնագրի բովանդակութեան և կարմրադեղով զրուած կաֆային. և նկարուած է Բեքտանիրոս Աղեքսանդրին աստղերը ցոյց տալիս:

13<sup>ր</sup>. Հան զԱրիստոնէլ աթոռով և զաշտկերտքն առաջին. Եւ զՄարդարէ մեղաւոր զրչակս յիշեա հոգեոր տ<sup>շ</sup>ր, զի և զու յիշեալ տիցիս առաջի. առենին քիւ. Նկարուած է Արիստոնէլ նստած աթոռի տ<sup>շ</sup>ր, ապարօշով (շալմայով) գլխարկը փաթաթած, առաջին գրակալ. դէմք շոքած են Աղեքսանդր և ուրիշ շորս աշակերտներ:

16<sup>ա</sup>. «Ի հաւ զձին հան, որ հեծեալ լինի». այդպէս էլ պատկերն է, Աղեքսանդր ձին հեծած. թուրը կողքից կախ և կապարճը զաւակում.

22<sup>ա</sup>. «Շաղկի տեղ թող, ով քաջ զրագիր»:

28<sup>ր</sup>. Ով քաջ հսկուոր և անյաղթ ֆլիսոփայ (8!) հոգեոր տ<sup>շ</sup>ր, հան զքաղաքն զՄքանդարիայ հրաշապեղ և ահարկու տեսլեամբ, հրաշապարդ և երանգ երանգ զունով, ո՞ւ վայել է քոյին ս<sup>շ</sup>ր տեսութեազ. միթէ առաջին զրոց սուզն փարատի ի խոց սրտէս ի քո ծառայէ»:

42<sup>ր</sup>. Զկորիւն հան ծաղիկ, հոգեոր տ<sup>շ</sup>ր, և զքո նուաստ ծառէ յիշեա, զի յոյժ աշխատեցայ:

Ունինք աւելի պարզ ցուցումներ, թէ այստեղ յիշցւած հնգեոր տէրը և նկարիչը Դրիգորիսն կաթուղիկոսն է. —

43<sup>ա</sup>. ԶԳ<sup>ւ</sup>րզրիս կաթուղիկոսն յիշեցէք ի ք<sup>շ</sup>ր, զնկարող այսմ զբոց և ա<sup>շ</sup>ե ողորմի ասացէք ամէնք:

46<sup>ր</sup>. Շաղկի տեղ թող, ո՞ւ որ ասէ և զԳ<sup>ւ</sup>րզրիս կաթ<sup>շ</sup>ղկոն զնկարող սորա յիշեան:

57<sup>ր</sup>—58<sup>ա</sup>. Ներքեի լուսանցքում. «Շաղկի տեղ թող, ով սըրասէր եղբայր. և զԳ<sup>ւ</sup>րզրիս կ<sup>շ</sup>թղկոն յիշեա ի տ<sup>շ</sup>ր. ըստ նմին և Մ<sup>ւ</sup>րդ անիմաստ զրիչս Արճիշեցի յիշը ի ք<sup>շ</sup>ր»:

85<sup>ր</sup>. Ներքեի լուսանցքում. «զայդ բ. երեսդ զծաղիկն լից. քով արա, հոգեոր տ<sup>շ</sup>ր, որ թիւտի կեղտն չերեայ և անմեղապիր լեր. զթորւան վոշին կու հանին, էնց եղաւ»:

101<sup>o</sup>. Հան ծառեր և զետ.

Զնկարող այս լաւ գրքիս զկթ-ղկան Գրգ-ըիս. այլ և զդադող այսմ տուիս զՄարգարէ Արքիշեցիս, յիշեցէք ի ք-ու ա-ծու:

112. Բնադրի հետ գրուած. «զթուխտդ ի շուռ տուր, հո- զեռ տր, և հան զկոփւն Աղէսամնդրու և Պաւոսի, զի այդ երեսդ նեղւած էր զբու ոտաց մոխիլս յիշեաւ»:

Աղէքսամնդրի պատմութեան խմբագրութեան տեսակէտով հե- տաքրքրական են յատկապէս հետեւալ նկատողութիւնները, որ- տեղից երեսմ է, որ Երուսաղէմի Զ-ը «բէթերի» կամ կաֆաների և նրանց համապատասխան նկարների տեղի վերաբերմամբ նախ- կին օրինակի համեմատութեամբ փոփոխութեան է ենթարկուել, իսկ 28<sup>o</sup> նկատողութիւնը ցոյց է տալիս, որ այս Զ-ը առաջին արտագրութիւնը չէր Գրիգորիսի պատուէրով և Մարգարէ զրչի ձեռքով:

128<sup>o</sup>—129<sup>o</sup>. Զայդ. «Պ. թէթս ի նշանած տեղն զրէ. զի յաւ- ըինակն սխալ էր. և զծաղիկդ այլ անդ հան, որ ուղիղ դայ»:

133<sup>o</sup>—134<sup>o</sup>. Ով քաջ տարտօղ (քարտող), թէթերդ ու ծա- ղիկդ ի յօրինակն էնց էր դրած ի յետ, ապա ինձ այսպէս թըի- թէ ի նշանած տեղն լաւ է. ո՞պ որ զու կամիս, էնց արա- զդ-ըգրիս կաթ-ղկան նկարող գրքիս և զՄարգարէ զրիչս յիշե- ցէք ի ք-ուս»:

136<sup>o</sup>—137<sup>o</sup>. Ներքելի լուսանցքում. Յայսմ վայրի էի, յոր- ժամ եկաւ տ՝ թուլանէսն, մեր հոգեւոր եղբայրն ի ի հոգեւոր տէ- լէն և ասաց մեղաւորիս, թէ յոյժ մեղաղբեաց քեզ հոգեւոր տ՝ թն թէթերուն որ ի հետ կշտի արձրճած խաղին կու զրես, ես մեղայ. աստից ի յետ զինչ հոգեւոր տիրի հրամանքն է, թող էնց լինի»:

Զեռագիրը գրուած է Վարագում, 1536 թուին հետեւալ յի- շատակարանների համեմատ.

18<sup>o</sup>. «Գրեցաւ ի վարագ»:

«1. «Գրեցաւ զիրքս ի Վարագ. ի Զ-ը և ի Զ-ն թուին ձե- ռամբ Մարգարէ մեղսամած զրչիս. ի յառաջնորդութ-ն տ՝ թ կ-ըսպտ արհեպսի և Ստեփաննոս նորընծայ վ-ըսպին. ի վայելումն անձին իմոյ և յիշատակ... (թերի)».

Այս պրակէ վակելուց առաջ մի երկու խօսք էլ Մարգարէ զրչի մասին. բացի վերե յիշուած նկատողութիւններից կան և ուրիշ փոքրիկ յիշատակարաններ, որ միայն նորան են վերաբե- րում, որ տեղից երեսում է, որ նա 1522 թուից սկսած զըշու- թեամբ էր զբաղուել և ինքն էր պատրաստում իւր թանաքները

և ապրում էր Վարտագի միարան տէր Սահակի տաղաւարում կամ իցում այս Զ-ի գրութեան ժամանակ:

18<sup>ր</sup>. «Սուրաթի տեղ թող, ով զրադիր, և ա՞ծ ողորմի ասա անարժան զրչիս Մարգարէ արեղայիս. զի այսաւը յոյժ նեղացայ ի գրելս. մինչ զի զմեռանին լաւ համարեցայ քոն զկենդանութի՞ն, ի տան մէջ զրէի և երդիքն շատ զահմաթ ևուուր տնձրե ձզելով և կարկուտ. լինի թէ յէղունէն մինչ յերիկունն. ՝լ. անզամ ի վեր ենան և նստոյց. և ես զաւուրդ բանի թարկն չի տուիր:

55<sup>թ</sup>—56<sup>ա</sup>. «Հաղար բերան փառք ա՞յս ոք այս ժ՞ղ տարի է, որ զիր կու զրեմ, ի յուխտեց (?) արջասպէն ի զատ թանաք չի եփեր. այս Շատիսու արջապիս չէի հմաւու, ի մէկ զրէն էնց կուկ եկաւ զիրսու:

76<sup>ա</sup>. «Եւ անմեղաղիր լեր կարմիր զրիւ. զի զզ/նշուֆրն կարմիր գղակն տարաւ. ա՞ծ ի շէն պահէ զ՞արագայ դարպասն, որ խօղով մի սիլիկ զզա. առա. զրեցիս Զա՞ր Սահակն յիշեցէք ի ք՞ո, զտէր տաղաւարիս, որ կու զրեմ».

Մարգարէ զրչի մասին ունինք և ուրիշ տեղեկութիւն. նորա աշակերտ Յոհաննէս Արճիշեցին 1531 թուին զրած Յայսմաւուր-քէ յիշատակարանի. մէջ յիշում է իւր ուսուցիչների շարքում նաև շահէր Մարգարէ Արճիշեցւոյն»\*.

### Դ.

Միջնադարեան մեր զրականութեան մէջ Աղէքսանորի պատ- մութկան հետ շատ կարենոր դեր է կատարել ժողովլոդական ըն- թերցանութեան համար Պղնձէ քաղաքի պատմութիւնը իւր յա- րակից մասերով. Տաշեան և Չոպանեան մատնացոյց ին արել դրանց կապը «Հազար մի զիշեր» արարերէն հէրիաթների հետ. այդ երկը թարգմանուած է 1222 թուին արարերէնից Առաքել Անեցու ձեռքով\*\*. տարարադղարար ձեռքի տակ չունինք Պղնձէ քաղաքին վերաբերեալ զրականութիւն և նոյն իսկ հայերէն բոլոր հրատարակութիւնները, որպէս զի համեմատել և լիովին ճշդել կարողանալինք, թէ ինչ չափով է ներշնչուել Գրիգորիս Աղթա- մարցին աշխարհիս անցաւորութեան գաղափարին նուիրուած այս գլքից. Պղնձէ քաղաքը իւր պարզ, անպանոյն. բայց մի և նոյն ժամանակ երեւակայական պատմութեամբ, զարձել է մեր միջնադարեան հասարակ ժողովրդին մատչելի և հանելի ընթեր-

\* Դիւան Հայոց պատմ. Պիրը Ժ. եր. 22.

\*\* Տաշեան Յուցակ. 348. 354. 404. Հանդ. Ամս. 1894. 554. Հայ էջեր. Յառաջարան. 1.թ.

ցանութեան նիւթերից մէկը. այս հանդամանքն է եղիլ պատճառ, որ Գրիգորիս Աղթամարցին ճոխացրել է կաֆաներով, աւելի ևս խտացնելով Պղնձէ քաղաքի մէջ արտայայտւած մտքերը. այդ զործում նորան աջակից է հանդիսացել և Յովսէփ Աղթամարցին. գոնէ, ՄՌ. կաֆան նշանակուած է ոռրա անունով\*, լաւագոյն ապացոյցը, որ կաֆաների հեղինակը տաղասաց Գրիգորիսն է ոչ նոյնանուն այլ կաթուղիկոս:


Յովսէփ Աղթամարցու մասնակցութեամբ որոշում է այս ողբերի զբութեան ամենից ուշ ժամանակը. Գրիգորիս փոքրի մասին խօսք լինել չէ կարող, որովհետեւ 1544 թուից առաջ նա պէտք է դիուահաս պատանի լինէր, անընդունակ համակռւելու աշխարհիս ունայնութեան այնպիսի դադավարներով, որպիսին յստուկ են ծերութեան հաստելը թեակոխած անձանց. Գրիգորիս Աղթամարցին այս ողբերը պէտք է զրած լինի իւր կեանքի վերջին տարիներում. Այդ կաֆաները կամ ողբերը, ինչպէս կոչուած են Զ-ի մէջ, արժանի են յատուկ ուշադրութեան ոչ այնչափ իրենց բանաստեղծական յատկութիւններով, որչափ լիզուով, որպէս մի անգնահատելի աղբիւր մեր աշխարհաբարուի դարզացման պատմութեան. Նոքա մեր միջնադարեան բանաստեղծութեան մի օդակն են կազմում, որ սկսւմ է Աղէքսանդրի պատմութեան կաֆաներով:

Չեռքի տակ ունինք միայն մի ձեռադիր, որ պատերազմի ընթացքում բերուած է կտուց անապատից և այժմ կրում է 588 համարը, զրուած Ռուս քառասուն և ԲՀ (—1770) թուին Գրիգոր քահանայի ձեռքով. Չեռագրիս մէջ փոքր բացառութեամբ նշանակուած են այն կաֆաները, որ աւելացրել է Աղթամարցին, պարունակելով նաև հեղինակի յիշատակարանը և զրչի յաւելեալ տեղեկութիւնները, որ գնում ենք յաւելուածի (II և III) մէջ. Հեղինակի խօսքերի համեմատ՝ նորա զրած կաֆաների կամ ողբերի թիւը 43 է, «քառասուն ու երեք սարուջումլայ ոտանաւոր ողբ կայ ի սմայ». Գրիշ Գրիգոր քահանան իւր կողմից, երեխ, բացի այս յիշատակարանից, ուրիշ մի աղբիւրի վերայ հիմնուած, զրում է. ու Խ. ողբ յիւրմէն տսիալ (իմաստուն կաթուղիկոսն ուր Գրիգորիս), թող զայն, որ զերկու վանկն ու զմեկն ինքն է արարեր ի բնական ողբերն, զի պակաս էր», Գրիշ այս խօսքերը մեզ համար բոլորովին պարզ չեն. Զ-ի ողբերի թիւը ըստ թուաւամարների 74 է, բայց իսկապէս 72. որովհետեւ լի և լո՞յ թուաւ-

\* Կոսովանեան. Նոր Ժողովածու Դ. եր. 42 հրատարակի է Յովսէփ Աղթամարցու «Նըկու մնաս կայ ահապին» մկուածքով պակաս արժեքաւոր մի ուրիշ ոտանաւոր.

Մեր ձեռքի տակ եղած Պղնձէ քաղաքի կ. Պոլոս, 1850 թուի  
և Տփխիսի 1857 թ. ապագրութիւնների մէջ շկան բոլոր 72 կաֆա-  
ները, այս միայն 49, այսինքն Զ-ի մէջ հ, է, ը, թ, ժ, ժա, ժզ, ժե,  
ժէ, ժթ, է, իր, իզ, իզ, իւ, իէ, ւ ւ, լդ, լէ, լոզ, լոզ, լու,  
լոզ, իւէ, իւը, ծ, ծը, ծզ, ծո, ծէ, ծը, ծը, ծը, ծը, իւ, կը,  
կզ, կէ, կը, կիւ, չ, նա, նը, նզ, նդ, նշանակուածները, որոնցից  
ընդգծուածները Գրիգորիսինն են ըստ Զ-ի, քայլ այսուղ առանց  
իշտառակութեան։ Տպագրուածի մէջ պակասում են ա, ի, ո, զ, Շ,  
ժր, ժզ, ժզ, ժը, իա, իը, իիւ, լա, լդ, լը լիւ, լո, լու. իոր, իոթ,  
ժա, կ, կզ, որոնք բոլորն ել Զ-ու նշանակուած են Գրիգորիսի  
անունուի։

Չորսնիստիլ նոյնպէս հրատարակել է այս ողբերից մի քա-  
նիսը «Պղնձէ քաղաքի պատմութիւն» կոչվածը՝ վերագրութ,  
որուցից առաջին տունը համապատասխանութեալ Զեսոդրի ժուլիուս,



12°.—բ. ը=ժէ, 13°.—դ=իհ, 16°.—դ=լդ, 19°.—ե=ծը, 38°.—դ=կա, 40°.—է=կր, 40°.—ը=կհ, 42°.—թ=կղ, 43°.—ժ=կէ, 43°. Չորսնեանի ե. տունը, Զ-ի ծը. Յովսէփ Աղթամարցունն է, իսկ ը. տունը, Զեռ.-ի կր, Գրիգորիս Աղթամարցուն. բայց այս տեղ ևս յիշատակութիւն չկայ հեղինակների մասին:

Ստորև հրատարակում ենք Պղնձէ քաղաքի այդ կաֆաները, աների սկզբին աստղերով նշանակուելով Զ—ի մէջ Գրիգորիս Աղթամարցու յատկացուած տները, և ծանօթսւթիւնների մէջ բերելով Զ—ի վկայութիւնն այդ մասին իսկ խաչերով այսպիսիները, որոնք թէև նորանը պիտի լինեն, բայց չեն նշանակուած յուսալով, թէ ապագայում նոր ԶԶ-ի համեմատութեամբ կամ մտաենագրական վկայութիւններով հնարաւոր կլինի պարզել խնդիրը լիովին:

Զ-ը բերուած է Կոուց անապատից և այժմ կը բում 588 համարը. տախտակի կտշէպատ կաղմով,  $15 \times 11 \times 4\frac{1}{2}$  սմ. մեծութեամբ. գրուած է վատ բորի վրայ,  $15 \times 11\frac{1}{2}$  սմ., 230 թերթ. վերջինը մագաղաթեայ պահպանով. նուրազիր  $10 \times 6,8$  սմ. թղթի վատութիւնից անկիւնների կողմից թերթերը փշրւում են, բայց բարերադտարար ոչ մի տեղ չէ վնասուած գրուածքը. Դրիչն է Գրիգոր քահանայ, որ զբել է Զերմանորի Մակաց բակում, և ճիթ (=1700) թուին:

#### Բովանդակութիւնն է.

ա. 2—51°. Պատմութիւն Պղնձէ քաղաքին «Կայլ ի Բաղդատ քաղաք»:

